



ԵՎՐԱՍԻԱ հիմնադրամ



Հայ Էկոլոգների
Միություն



USAID
FROM THE AMERICAN PEOPLE

«Անդրասիականային Քուր և Արաքս գետերի
ջրային ռեսուրսների օգտագործման ու
բնապահպանական հիմնախնդիրները»
խանրապետական գիտաժողովի ևնոլվածներ

Материалы республиканской конференции
Проблемы использования и охраны
водных ресурсов
трансграничных рек Кура и Аракс”

ԵՐԵՎԱՆ 2006
ЕРЕВАН

Այսօր շրջակա միջավայրն աղտոտող լուրջ գործոն է տարածքում տիպային աղբավայրի բացակայությունը: 1996 թվականից սկսած՝ աղբավայր է ծառայում «Դիլիջան» ազգային պարկի տարածքին հարող, գուցեև նրա տարածք համարվող 2.5 հա տարածքը՝ դեպի Վանաձոր տանող ճանապարհի աջ հատվածում, որը տարվա մեջ, քաղաքապետարանի պատվերով, սանձառայության կողմից մի քանի անգամ հնարավորության չափով ենթարկվում է հողածածկման: Չնայած գետի ավազանից որոշ հեռավորության վրա է վերը նշված աղբավայրը, սակայն վարակիչ հիվանդությունների տարածման պոտենցիալ վտանգ է պարունակում:

Քաղաքի տարածքում գործող գյուղատնտեսական խոշոր տնտեսություններ գրեթե չկան:

Ֆերմերային մանր տնտեսությունների զբաղեցրած գյուղատնտեսական հողահանդակները հանքային պարարտանյութերով համարյա չեն պարարտացվում:

Ամենացավոտ հարցն այսօր բնակավայրերում կոյուղու ցանցի քայքայված և վտանգված վիճակն է: 1988 թվականի երկրաշարժից վնասվել է կոյուղու կոլեկտորը և առ այսօր չի վերականգնվել համապատասխան միջոցների բացակայության պատճառով, որի հետևանքով կենցաղային կոյուղաջրերը համատարած թափվում են Աղստև գետը և նրա վտակները: Այս հիմնախնդիրների լուծման համար առաջարկվում է՝

- աղբի և թափոնների նվազեցմանն ու վերանշակմանն ուղղված ծրագրի մշակում և իրագործում՝ համաձայն միջազգային փորձի,
- գոյություն ունեցող կոյուղու կոլեկտոր վերանորոգում, առանձին բնակավայրերի կոլեկտորների ելքային մասում կենսամաքիչների տեղադրում:

Գրականություն

1. Լ. Ա. Չիլինգարյան և այլ հեղ. « Հայաստանի գետերի ու լճերի ջրագրությունը», Երևան 2002թ.:
2. Оганесян Р. О. Озеро Севан вчера, сегодня..., Ереван: «Гитутюн» НАН РА, 1994, 478 с.
3. Григорян В. Г., Оганесян Р. О. Проблемы использования и управления природными ресурсами гидроэкосистем. Материалы республиканской молодежной научной конференции. Ереван, 2000г., с. 17-19.
4. Каминский В. С. Современные проблемы нормирования качества поверхностных вод. – Вод. ресурсы, 1980 N 3, с. 160-168.
5. Романенко В. Д., Оксикюк О.П. и др. Экологическая оценка воздействия гидротехнического строительства на водные объекты. АН УССР. Киев: Наукова Думка 1990, 255с.
6. Россолимо Л.Л. Антропогенное эвтрофирование водоемов. – В кн.: Общая экология, биоценология и гидробиология. М., 1975, 1.2., с. 8-60.
7. Россолимо Л.Л. Изменение лимнических экосистем под воздействием антропогенного фактора. М.: Наука, 1977, 144с.
8. Одум Ю. Основы экологии. М.: Мир, 1975.

Դեբեդ գետի ջրահավաք ավազանի Էկոլոգիական վիճակի ազդեցությունը մարդու առողջության վրա

Ա.Ա.Դանիելյան, Կ.Վ. Գրիգորյան
ԵՊՀ, Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոն

Կապված շրջակա միջավայրի աղտոտման հետ, ինչը այսօր Դեբեդ գետի ջրահավաք ավազանում պարզապես օրակարգային խնդիր է դարձել, Դեբեդի ավազանի տարածքում նկատվում է հիվանդությունների ցուցանիշների աննախադեպ աճ և դրանց երիտասարդացում:

ՀՀ սահմաններում Դեբեդ գետի ջրահավաք ավազանի տարածքը, որն ընդգրկում է ամբողջ Լոռու մարզը, դեռևս ԽՍՀՄ-ի ժամանակներից, պայմանավորված հարուստ բնական ռեսուրսներով, մեր հանրապետության գլխավոր արդյունաբերական

կենտրոններից մեկն է: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո փակվեցին մի շարք խոշոր գործարաններ, որի արդյունքում էկոլոգիական վիճակն ավազանի տարածքում փոքրիշատե բարելավվեց: Եվ որպես մարդածին աղտոտման հիմնական աղբյուրներ մնացին աղբը, կենցաղային ու գյուղատնտեսական հոսքաջրերը, որոնք առանց որևէ մաքրման ուղղակի լցվում են ավազանի գետերը՝ աղտոտելով շրջակա միջավայրը [6]: Այս տեսանկյունից կարևոր է նշել, որ ներկայումս ավազանի տարածքում թափոնների կառավարման գրեթե ոչ մի մեխանիզմ չի գործում՝ կապված նաև տնտեսական հոսքաջրերի, արտանետումների և թափոնների հետ:

Ութնամյա ընդմիջումից հետո վերագործարկվեց Ալավերդու պղնձածուլական գործարանը, իսկ 2000թ.՝ Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատը, ինչը կրկին սրեց Դեբեդ գետի ջրահավաք ավազանում առանց այդ էլ առկա էկոլոգիական խնդիրները՝ բերելով ավազանի տարածքի էլ ավելի աղտոտմանը: Սակայն անհրաժեշտ է նշել, որ ներկա վիճակը զուտ բնապահպանական խնդիր չէ, և շրջակա միջավայրում տեղի ունեցող ցանկացած փոփոխություն՝ ուղղակի, թե անուղղակի ճանապարհով, իր ազդեցությունն է թողնում մարդու օրգանիզմի վրա: Կապված շրջակա միջավայրում տեղի ունեցող բացասական փոփոխությունների հետ, ընկնում է մարդկանց դիմադրողականությունը, և նրանք ավելի նրբազգաց են դառնում տարբեր գործոնների նկատմամբ:

Ավազանի տարածքում, պայմանավորված էկոլոգիական գործոններով, ներկայումս առանձնանում են հատկապես սրտանոթային, շնչառական ուղիների, քաղցկեղային և ալերգիկ բնույթ ունեցող հիվանդությունները: Սկսած 1997թ.՝ այսինքն գործարանի վերագործարկումից հետո, Ալավերդի ու Ախթալա քաղաքներում, կապված մթնոլորտային օդի աղտոտման հետ, բնակչության մոտ նկատվեց բրոնխիտ, խրոնիկ բրոնխիտ, շնչառական և սրտանոթային հիվանդությունների դինամիկ աճ: Ըստ Ալավերդի քաղաքի պոլիկլինիկայի հաշվետվության տվյալների՝ 2000-2003թթ. բացի այն, որ շատ հիվանդություններ սկսեցին գերազանցել միջին ցուցանիշները, նորագոյացությունների դեպքում գերակշռում են առավելապես շնչափողի, բրոնխների և թոքերի ուռուցքները: Սկսած 1998թ. Ալավերդիում ավելացել է տուբերկուլյոզով հիվանդների թիվը՝ հատկապես վերջին հինգ տարիների ընթացքում, երբ ըստ մասնագետների գրանցվել են նաև ընտանեկան տուբերկուլյոզի դեպքեր: Տարածաշրջանի ընդհանուր էկոլոգիական վիճակն իր ազդեցությունն է թողել նաև ծննդաբերությունների որակական ցուցանիշների վրա, սկսած 1997թ. ավելացել են վաղաժամ ծննդաբերությունները, վիժումների մակարդակը, արատով ծնված երեխաների թիվը, իսկ նորմալ ծննդաբերությունների թիվը գնալով նվազում է [4]:

Այս վիճակագրական տվյալները գալիս են փաստելու շրջակա միջավայրի աղտոտվածության ուղղակի ազդեցությունը մարդու առողջության վրա՝ հաշվի առնելով այն, որ ըստ Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի տվյալների՝ Ալավերդի քաղաքում ծծմբային գազերի պարունակությունը մթնոլորտում «ASP» ՓԲԸ-ն վերագործարկումից առաջ եղել է թույլատրելի նորմերի սահմաններում: Սահմանելի թույլատրելի խտությունները (ՍԹԽ) գերազանցվել են 1998թ.: Ընդ որում՝ ՍԹԽ-ի գերազանցման նվազագույն ցուցանիշներն արձանագրվել են 1999թ., երբ մթնոլորտում ծծմբային գազերի խտությունը թույլատրելի սահմաններից բարձր է եղել 3.4 անգամ, իսկ 2004թ. դեկտեմբերին դիտարկվել է ՍԹԽ-ն գերազանցելու առավելագույն արժեքը՝ 12.2 անգամ, 2005թ. այդ ցուցանիշը կազմել է մոտ 10 անգամ: Պայմանավորված նրանով, որ Ալավերդիում գործարանը ամսական մոտ 10տ ծծմբային գազեր ուղղակիորեն արտանետում է մթնոլորտ, դրանց կուտակումը կարելի է անգամ անգեմ աչքով տեսնել:

Ախթալա քաղաքի օդային տարածքը ևս անընդհատ աղտոտվում է: «Մեթըլ Փրինս» ՓԲԸ-ից տարածվող թունաքիմիկատների չափերը, ըստ քաղաքապետարանի, բազմաթիվ անգամ գերազանցել են առավելագույն արտանետումների թույլատրելի նորմերը [4]:

Հիվանդությունների աճի նման դինամիկա նկատվում է նաև Վանաձոր քաղաքում, վերջին 9 տարիներին ավելացել են կենտրոնական նյարդային համակարգի ախտահարումները, էպիլեպսիան, գլխուղեղի քաղցկեղով հիվանդների և ինֆարկտների թիվը: Այսպիսին է վերջին տարիներին Վանաձորի թիվ 2 հիվանդանոցում արձանագրված որոշ հիվանդությունների վիճակագրությունը (Աղյուսակ 1):

Հիվանդության անվանումը	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
Ռևմատիզմ ակտիվ փուլում	12	15	16	17	22
Ուղեղի անոթային հիվանդություններ	180	183	202	264	278
Ինֆարկտ	127	156	149	156	192

Ըստ ՀՀ բնապահպանության նախարարության Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոնի տվյալների՝ Վանաձորում 1996թ. հետո մթնոլորտում ավելացել է պինդ մասնիկների սահմանային թույլատրելի խտությունը: Թույլատրելի քանակից փոշու միջին տարեկան խտության գերազանցման ցուցանիշները բերվում են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

1996թ.	2000թ.	2001թ.	2002թ.	2003թ.	2004թ.
1.3	1.4	1.5	1	1.1	2.2

Ըստ աղյուսակի, եթե անցած տարիներին մթնոլորտում փոշու խտությունը գերազանցել էր նորման առավելագույնս 1.5 անգամ, ապա 2004թ. այդ ցուցանիշը կազմում է 2.2 անգամ, և այսօր էլ ՍԹՄ-ը շարունակում է գերազանցվել: Իսկ փոշին անկասկած նպաստում է շնչառական համակարգի և սրտանոթային հիվանդությունների ավելացմանը: Մոնիտորինգի կենտրոնի ուսումնասիրությունները Վանաձոր քաղաքում արձանագրել են նաև մթնոլորտում առկա շմուլ և ծծմբային գազեր, վերջիններս ՍԹՄ-ը 1996-2005թթ. գերազանցել են 1.3-2.4 անգամ [1,2]:

Իհարկե, հիվանդությունները չեն առաջանում միայն մեկ գործոնի ազդեցությամբ: Ներկա վիճակն արդյունք է ոչ միայն մթնոլորտային օդի աղտոտման՝ գործարաններից արտանետումների հետևանքով, այլ նաև տրանսպորտի արտանետումների, ավազանի ամբողջ տարածքում անտառների մասսայական հատումների և էկոհամակարգերի այլ բաղադրիչների աղտոտման. ոչ մի դեպքում չի կարելի անտեսել նաև սոցիալական գործոնը:

Անտառը հատկապես քաղաքային բնակավայրերի շրջակայքում այսօր ուրբոլանդաֆոսի գլխավոր բաղադրիչներից մեկն է և հսկայական դեր է խաղում քաղաքի էկոլոգիական խնդիրների լուծման հարցում: Իսկ վերջին տարիների մասսայական անտառահատումները և աճող մարդածին ազդեցությունը անտառի ու ընդհանրապես կանաչ գոտիների վրա ունենում են ոչ ցանկալի հետևանքներ՝ բերելով անտառի պաշտպանիչ ֆունկցիայի նվազեցման և աստիճանական դեգրադացիայի [5]:

Պետք չէ անտեսել նաև այն փաստը, որ Դեբեդ գետի ջրահավաք ավազանի տարածքով է անցնում հանրապետության գլխավոր մայրուղին, որը տնտեսական շրջափակման տարիներից դարձել է գերերթնեկելի, քանի որ ՀՀ-ն արտասահմանի հետ կապող միակ ճանապարհն է, հետևաբար աճել է նաև արտանետումների քանակը ավտոտրանսպորտի ոլորտից:

Աղտոտված են ավազանի գետերն ու հողերը, հետևաբար աղտոտված գետաջրերով ոռոգումը գյուղատնտեսական նպատակներով հիվանդությունների ու վարակների պոտենցիալ աղբյուր կարող է հանդիսանալ:

Հիվանդությունների դինամիկ աճի հարցում էական դեր են խաղում նաև ավազանի տարածքում աղքատության մեծ մակարդակը և սոցիալական գործոնը՝ էլ ավելի խորացնելով քննարկվելիք խնդիրները [3]: Այսպիսով, ոչ մի դեպքում ճիշտ չէ առանձնացնել էկոլոգիական համակարգերն ընդհանուր բնական կենցուկունից:

Գրականություն

1. Բուլղաղարյան Ն., Էկոլոգիական փոփոխությունների հիվանդությունների պատճառ, Heta Online, 2005:
2. ՀՀ բնապահպանության նախարարություն, 2003-2005թթ. նախարարական զեկույց, Երևան, 2006թ., էջ 148:
3. Մանասյան Մ.Գ. և ուրիշներ, Լոռու մարզ (բնությունը, բնակչությունը, տնտեսությունը), Եր., Երևանի համալս. հրատ., 2003, 208 էջ: